

**Հայաստանում ԵՄ աջակցությամբ իրականացվող
երեք ծրագրերի կողմից կատարված՝
աշխատանքային իրավունքների վերաբերյալ հետազոտությունների հիմնական
արդյունքների ներկայացում**

**Presentation of key findings of the studies on labour rights in Armenia conducted by
three EU-funded projects**

Երեք ծրագրերի մասին / About the three projects

«Արժանապատիվ աշխատանք հիմա՝» ծրագիրն իրականացվում է Զելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակի, Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոնի, Զասարակական հետազոտությունների առաջատար խմբի, Ֆակտոր տեղեկատվական կենտրոնի կողմից՝ Կրթություն և համերաշխություն արիմիության հետ համատեղ:

“Decent work now!” project is implemented by Helsinki Citizens' Assembly – Vanadzor, Transparency International Anti-Corruption Center, Advanced Public Research Group, Factor Information Center NGO in cooperation with Education and Solidarity Union. The Project is funded by the European Union.

«Հանուն աշխատանքի. հաշվետու և ներառական աշխատաշուկայի նախաձեռնություն» ծրագիրն իրականացվում է Տեղեկատվական և Զաղորդակցության Տեխնոլոգիաների Գործատուների Միության, Արմավիր Զարգացման Կենտրոնի և Կիրակի Զարգացման Հիմնադրամի կողմից:

“Labour Action: Collaborative Effort for Accountable and Inclusive Employment” project is implemented by Union of Employers of ICT, Armavir Development Center and Kiraki Development Foundation. The Project is funded by European Union.

«ԵՄ-ն հանուն աշխատանքային իրավունքների. Հայաստանում քաղաքացիական ձայնի և դերի հզորացում՝ հանուն աշխատանքային իրավունքների և սոցիալական պաշտպանության» ծրագիրն իրականացվում է ՕքսեՉեն հիմնադրամի, «Սոցիոսկոպ» ՀԿ-ի, «Ասպարեզ» լրագրողների ակումբ ՀԿ-ի, «Հայ առաջադեմ երիտասարդություն» ՀԿ-ի, «Բազմակողմանի տեղեկատվության ինստիտուտ. Հայաստան» ՀԿ կողմից՝ «Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» ՀԿ-ի և Եվրասիա համագործակցություն հիմնադրամի հետ համատեղ: Ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից:

“EU4LabourRights: Increasing Civic Voice and Action for Labour Rights and Social Protection in Armenia” project is implemented by OxYGen Foundation, Socioscope NGO, “Asparez” Journalists’ Club NGO, Armenian Progressive Youth NGO, Media Diversity Institute - Armenia in cooperation with Protection of Rights without Borders NGO, and Eurasia Partnership Foundation. The Project is funded by the European Union.



ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ
EUROPEAN UNION FOR ARMENIA



**«ԵՄ-ն հանուն աշխատանքային իրավունքների»
ծրագրի հետազոտությունների արդյունքների
ամփոփում
17.02.2022**

ՀՀ-ՈՒՄ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՎԵՃԵՐԻ ԴԱՏԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ՈՒՍՈՒՄՆԱԿՈՒԹՅՈՒՆ

*“Իրավունքների Պաշտպանություն առանց
Սահմանների” ՀԿ
Արաքս Մելքոնյան, Նախագահ*

Ուսումնասիրության նպատակը

ա) բացահայտել աշխատանքային իրավունքի իրացման ոլորտում առավել հաճախ ծագող խնդիրները,

բ) վերլուծել դատական պրակտիկան՝ բացահայտելով դատարանի մատչելիությունը, առկա մոտեցումները, այդ թվում՝ հակասությունները նմանատիպ քաղաքացիական և վարչական գործերի քննության դեպքում:

Մեթոդաբանությունը

Ուսումնասիրությունը իրականացվել է Datalex առցանց համակարգով հրապարակված դատական ակտերի վերլուծության հիման վրա՝ հատուկ մշակված գործիքի միջոցով:

Ուսումնասիրվել են 2019-2021թթ.-ին կայացված 384 քաղաքացիական գործերով և 112 վարչական գործերով վճիռներ, ինչպես նաև 123 կարճման մասին որոշումներ:

Գործերի տեսակները

- Կարգապահական և ոչ կարգապահական հիմքով աշխատանքից ազատում` 265 գործ,
- Կարգապահական տույժի նշանակում` 24 գործ,
- Աշխատավարձի և այլ վճարների բռնագանձում` 51 գործ,
- Իրավաբանական նշանակություն փաստերի (աշխատանքային ստաժի և փաստաթղթի պատկանելիության) հաստատում` 114 գործ,
- Կենսաթոշակի նշանակում կամ վերահաշվարկ` 25 գործ և այլն:

Գործերով պատասխանողը

Գործերի զգալի մասով հայցերը բերվել են պետական ոչ առևտրային կազմակերպությունների և բուժ.հաստատությունների, համայնքների, մարզպետարանների, ինչպես նաև պետական այլ մարմինների դեմ:

Մասնավոր կազմակերպությունների դեմ բերված բողոքների թիվը մտավ է համեմատաբար ցածր /հայցերի 32 %/:

Արդյունքներ

Դատարանը բավարարել է դիտարկված գործերի 72%-ը:

- Բավարարման ամենաբարձր ցուցանիշը գրանցվել է հրավարանական նշանակույթյան փաստերի (աշխատանքային ստաժի) հաստատման վերաբերյալ գործերով՝ 95%:*
- Ամենացածր ցուցանիշը՝ վարչական գործերով կարգապահական հիմքով ազատման վերաբերյալ գործերով:*

Փաստաբանի դերը

Դիտարկված գործերի 83%-ով հայցվորն ունեցել է ներկայացուցիչ:

Առանց փաստաբանի աջակցություն գործերից 41%-ը մերժվել են:

24 դեպքում (գործերի 5%) հայցվորը ներկայացված է եղել հանրային պաշտպանի կողմից, որից 22-ը՝ քաղաքացիական գործերով:

Կանանց կողմից բերված հայցեր

- Հայցվորները եղել են կանայք քաղաքացիական գործերի 56%, սակայն վարչական գործերով՝ միայն 23% գործերով:
- Կանայք կազմել են նաև մեծամասնությունն փաստաթղթի պատկանելիության հաստատման վերաբերյալ գործերով, քանի որ ամուսնությունից հետո փոխել են ազգանունը և իրավահաստատող փաստաթղթերում և անձնագրում անձնական տվյալները տարբերվել են:

Աշխատանքից ազատման վիճարկում

- Բավարարվել է հայցերի 63%:
 - Գործերի 53% քննվել է երևանում:
 - Հայցերի 67%-ը բերվել են պետական մարմինների կամ պետությանը պատկանող կազմակերպությունների դեմ՝ հատկապես կրթական և առողջապահական ոլորտներում:
- Վարչական և քաղաքացիական գործերով արձանագրված խնդիրները հիմնականում նույնն են, բացառությամբ կոնկրետ տեսակի ծառայությունը կարգավորող օրենսդրությամբ պայմանավորված առանձնահատկությունների:

Արձանագրված խնդիրներ

- Աշխատանքից ազատման մասին հրամաններում իրավական և/կամ փաստական հիմքի բացակայություն:
- Կրճատումների տեղի չունենալու դեպքում կրճատում, կրճատումների ձևական բնույթը, կրճատման կամ աշխատանքի պայմանների էական փոփոխության դեպքում ոչ պատշաճ ծանուցելը, այլ աշխատանք չառաջարկելը, այլ աշխատանք առաջարկելու անհնարինություն մասին չտեղեկացնելը:
- Պայմանագրի, ազատման մասին հրամանի չտրամադրելը, ազատման մասին ՊԵԿ-ի քաղվածքից իմանալը:
- Ոչ աշխատանքային օրերին ազատման մասին հրամանների արձակում:
- Փորձաշրջանի ավարտից հետո պայմանագրի լուծում՝ աշխատակցի հղիության պատճառով, բայց այլ պատրվագով:

- Աշխատողի կողմից ազատման մասին ծանուցումը հետ վերցնելու համար նախատեսված ժամկետի չպահպանում;
- Որոշակի ժամկետով կնքված պայմանագրի ժամկետի լրացման հիմքով ազատում այն դեպքում, երբ պայմանագիրը պետք է դիտարվի որպես անժամկետ կնքված;
- Կենսաթոշակային տարիքը լրանալու պատճառով պայմանագրի լուծում այն դեպքում, երբ նման հիմք նախատեսված չէ աշխատանքային պայմանագրով,
- Աշխատանքին չհամապատասխանելու հիմքով ազատում գնահատում չանցկացնելու պայմաններում,

Ծառայողների դեպքում

- Առանց ատեստավորման կրճատում:
- Կրճատման դեպքում նշանակման նախապատվության իրավունքի չապահովում:
- Հայեցողական կամ վարչական պաշտոններից ազատում՝ օրենքով սահմանված ժամկետները չապահանելով կամ առանց հիմքի նշման:

Աշխատողի կարգավիճակը վատթարացնող նորմերի կիրառում /օրինակ, սահմանային տարիքի վերանայման դեպքում/:

- Առանց ծառայողի համաձայնության ավելի ցածր պաշտոնի տեղափոխելը:
- Դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռի առկայության դեպքում ծառայության մեջ չվերականգնելը:



Կարգապահական հիմքով ազատում կամ տույժի նշանակում

- Հրամաններում իրավական և/կամ փաստական հիմքի բացակայություն:
- Երկու կարգապահական տույժ նշանակելը նույն արարքի համար
- Աշխատողից բացատրություն չվերցնելը, բացատրության համար ողջամիտ ժամանակ չտրամադրելը, բացատրությամբ տրամադրված փաստերը չուսումնասիրելը, հաշվի չառնելը, ներքին/ծառայողական քննություն չիրականացնելը, տույժի նշանակման հիմքում ընկած հանգամանքները հիմնավորող փաստաթղթերի բացակայություն:

- Արձակուրդի ընթացքում տույժ կիրառելը:
- Օրենքով նախատեսված ժամկետից հետո կարգապահական տույժ նշանակելը:
- Տույժի ենթարկվելու մասին չձանուցելը:
- Կարգապահական տույժի ենթարկելն այն պարտականությունների չկատարման համար, որոնք չէին մտնում աշխատողի պարտականությունների մեջ, կամ պարտականությունների կատարման համար պայմաններ չստեղծելը:

Աշխատավարձի և այլ վճարների բռնագանձում

Դիտարկված գործերով բարձրաձայնվել է աշխատավարձի, չօգտագործած արձակուրդի, հարկադիր պարապուրդի, անաշխատունակության վճարի, արձակման նպաստի, արտաժամյա աշխատանքի հատուցման չվճարման կամ ուշացումով վճարման խնդիրներ:

Նշված գործերի 82%-ը քննվել են Երևանում:

Դատարանը բավարարել է քաղաքացիական գործերով հայցերի 61%-ը և վարչական գործերի 85%-ը:

Արձանագրված խնդիրներ

- Բազմաթիվ գործերով կուտակվել է երկարատև չօգտագործած արձակուրդ, որը չի հատուցվել աշխատանքից ազատելիս /և մասնավոր սեկտորում, և զին. ու քրեակատարողական ծառայողների շրջանում/:
- Որոշ դեպքում գործատուն չի վճարել չօգտագործված արձակուրդի հատուցում՝ պնդելով, որ աշխատողը պահանջից հրաժարվել է՝ պայմանագրի ժամկետի երկարացման մասին համաձայնագրում նշելով, որ այլ պահանջ առկա չէ:
- Այլ տեսակի պայմանագրեր կնքելը փաստացի աշխատանքային հարաբերությունների պայմաններում:
- Համայնքապետարան գործատուն աշխատավարձից վճարել է հարկեր առանց աշխատողի համաձայնությամբ:

Առաջարկություններ

- Բարձրացնել աշխատանքային իրավունքների վերաբերյալ իրազեկվածությունը, հատկապես մարզերում և կանանց շրջանում, այդ թվում՝ աշխատանքից ազատման դեպքում առկա երաշխիքների, վճարների ու հատուցումների վերաբերյալ:

-Աշխատանքի և առողջապահության տեսչական մարմնի կողմից, իր լիազորություններն իրացնելիս, մշակել տեղեկատվություն աշխատանքից ազատման հրամանների, ծանուցումների պարտադիր վավերապայմանների վերաբերյալ, օրինակ, մշակել օրինակելի ձևեր՝ գործատուի պրակտիկան օրենսդրությանը և դատական պրակտիկային համապատասխանեցնելու համար:

Նշված խնդիրները քննարկել գործատուների, աշխատողների և նրանց ներկայացուցիչների համար անցկացվող սեմինարների

- ՀՀ Աշխատանքային օրենսգրքում կատարել փոփոխություններ՝ Սահմանելով կարգապահական պատասխանատվության ենթարկելու դեպքում բացատրության համար ողջամիտ ժամկետ տրամադրելու պահանջ՝ հաշվի առնելով խախտման բնույթը, ծանրությունը, հետևանքները, կարգապահական խախտման հանգամանքները և այլն:
 - Օրենսդրությամբ հստակեցնել կրկնակի պատասխանատվության արգելքը:
 - Կարգապահական տույժը պետք է համաչափ լինի կատարված կարգապահական խախտմանը:

Հստակեցնել որոշակի ժամկետով աշխատանքային պայմանագրի կնքման հիմքերը և աշխատանքի բնույթն ու կատարման պայմանները, որոնցով կարող են կնքվել որոշակի ժամկետով աշխատանքային պայմանագրեր:

Աշխատանքային օրենսգրքով բացառել աշխատողին կեսնաթոշակային տարիքի հիմքով աշխատանքից հեռացնելը

*Քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանել
աշխատանքային վեճերի ի պաշտոնե (ex officio) լուծման
սկզբունքը:*

*Ապահովել աշխատանքային վեճերի օրենսգրքով
նախատեսված եռամսյա ժամկետում քննության պահանջը:*

*Իրավաբանական նշանակության փաստերի հաստատումը
կարող է իրականացվել նաև արտադատական կարգով՝
նոտարների կողմից:*



Շնորհակալություն 😊



ԵՎՐՈՊԱՆ ԱՌԻՔՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՍՏ
EUROPEAN UNION FOR ARMENIA

DECENT
WORK
NOW

ԱՐԺԱՆԱՊԱՏԻՎ
ԱՇԽԱՏԱՆԵ
ՀԻՄԱ

Աշխատանքային իրավունքների պաշտպանվածության վիճակի ուսումնասիրության արդյունքներ

ԱՐԺԱՆԱՊԱՏԻՎ ԱՇԽԱՏԱՆԵ
ՀԻՄԱ




Մեթոդաբանություն

	Հետազոտություն
<u>Հետազոտության տեսակը</u>	Քանակական, ընտրանքային, քվոտային
<u>Հետազոտության մեթոդը</u>	Կիսաստանդարտացված հարցազրույցների մեթոդ, CAPI (Computer-assisted personal interviewing*)
<u>Հարցումների իրականացման ժամանակաշրջանը</u>	Հունիս, 2021թ.
<u>Ընտրանքի ծավալը (n)</u>	1062 հարցազրույց
<u>Ընտրանքի բաշխվածությունը ՀՀ տարածքում</u>	Բաշխվել է ՀՀ բոլոր մարզերում (այդ թվում՝ նաեւ Երեւանում) բնակչության թվին համամասնորեն՝ աշխատող բնակչության շրջանում /կամ ովքեր վերջին 2 տարվա ընթացքում աշխել են
<u>Ընտրանքի տեսակը</u>	Ստրատիֆիկացված, կլաստերային ընտրանք՝ հիմնված նախապես առանձնացված քվոտաների վրա
<u>Վստահության միջակայքը, սխալի մեծությունը</u>	95% վստահության միջակայք, $\pm 2.81\%$ սխալի մեծություն
<u>Հարցվողների տարիքը</u>	18 տարեկան եւ ավել


* Համակարգչային օժանդակությամբ անհատական հարցազրույց. հարցազրույցների իրականացման տեխնիկա է, որի կիրառման ժամանակ, հարցազրույցավարը հարցվողի հետ դեմ առ դեմ հարցազրույցի ժամանակ ստացված տեղեկատվությունը մուտքագրում է համակարգչում տեղադրված էլեկտրոնային հարցաթերթում:

Հարցվողների սեռա-տարիքային բաշխվածությունը

Հարցվողների սեռ




Հարցվողների տարիքային խմբեր



Բնակավայրի տեսակ



2021թ. հարցումների իրականացման կետերի քարտեզ



Ելակետային ուսումնասիրության հիմնական նպատակն է

Պարզել ՀՀ-ի աշխատող
բնակչության աշխատանքային
իրավունքների
պաշտպանվածության վիճակը և
բացահայտել առկա խնդիրները

Ուսումնասիրված հարցերի շրջանակը

- պայմանագրային հարաբերություններին առնչվող հիմնախնդիրները,
- պայմանագրի բացակայության դեպքում աշխատանքային հարաբերությունների կարգավորման մեխանիզմները և դրանց հետ կապված հիմնախնդիրները,
- աշխատանքի և հանգստի ռեժիմի հետ կապված խնդիրները,
- արտաժամյա աշխատանք, աշխատանքային պարտավորություններից չբխող աշխատանք,
- աշխատանքի պայմանների խնդիրները՝ ներառյալ աշխատողների առողջության պահպանման հարցերը,
- աշխատանքի վարձատրության, խրախուսանքի և պատասխանատվության հետ կապված հարցերը,
- աշխատանքային պարտավորությունները և քաղաքական գործընթացներին աշխատողի ներգրավվածություն,
- աշխատանքային հարաբերություններում վեճերի առկայությունն ու դրանց լուծման մեխանիզմները՝ ներառյալ արհմիություններին վերաբերող հարցերը,
- աշխատավայրում խտրականության դրսևորումները տարբեր սոցիալական խմբերի հանդեպ՝ կանանց ևն,
- անչափահասների աշխատանք.



ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՏՈՐ
EUROPEAN UNION FOR ARMENIA


DECENT
WORK
NOW

ԱՐԺԱՆԱԴԱՏԻՎ
ԱՇԽԱՏԱՆՔ
ՀԻՄՆ

ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ




Ներկայումս աշխատող Եք



■ Այո ■ Ոչ, սակայն աշխատել եմ վերջին 2 տարվա ընթացքում

Գծապատկեր 4. Ի՞նչն է հիմնական պատճառը, որ ներկայումս չեք աշխատում



Չարցվողների սեռային բաշխումն՝ ըստ գբաղվածության ոլորտների

Ոլորտ	Արական	Իգական
Կրթություն և գիտություն	11.3%	33.8%
Մշակույթ, սպորտ	4.7%	3.6%
Առողջապահություն և սոցիալական աշխատանք	2.5%	11.0%
Վերամշակող արդյունաբերություն /հրուշակեղենի արտադրություն և այլն	8.1%	7.8%
Կոմունալ ծառայություններ /Էլ.Էներգիա, գազ, կապ, աղբահանություն...	7.4%	3.0%
Շինարարություն	12.3%	0.3%
Մեծածախ կամ մանրածախ առևտուր	10.2%	11.8%
Պաշտպանություն և այլ ուժային կառույցներ, իրավապահ համակարգ	11.3%	1.9%

Հարցվողների սեռային բաշխումն՝ ըստ կրթական մակարդակների

Կրթություն	Արական	Իգական
Թերի միջնակարգ (8-ամյա)	3.6%	2.0%
Միջնակարգ (10-12-ամյա)	31.8%	18.4%
Միջնակարգ մասնագիտական (քոլեջ) / թերի բարձրագույն	19.7%	27.4%
Բարձրագույն (առանց մագիստրատուրայի)	26.8%	31.5%
Բարձրագույն (ներառյալ մագիստրատուրա)/գիտական աստիճան	18.0%	20.6%
Ընդամենը	100%	100%

Հարցվողների աշխատավարձի չափերը՝ ըստ սեռի

Աշխատավարձի չափ	Արական	Իգական
Մինչև 35000 դրամ	1.50%	6.40%
35000-ից մինչև 65000 դրամ	4.20%	17.40%
65000-ից մինչև 150000 դրամ	54.10%	62.80%
150000-ից մինչև 350000 դրամ	27.20%	9.30%
350000-500000 դրամ	4.90%	1.00%
500000-750000 դրամ	1.90%	0.30%
750000-1000000 դրամ	0.20%	0.20%
1000000 դրամից ավել	0.40%	0.20%
Հրաժարվում եմ պատասխանել	5.50%	2.40%
Ընդամենը	100.00%	100.00%



ԵՎՐՈՊԱՆ ՄԻԻԹՅՈՒՆ ԲԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՍՏ
EUROPEAN UNION FOR ARMENIA


DECENT
WORK
NOW

ԱՐԺԱՆԱԴԱՏԻՎ
ԱՇԽԱՏԱՆՁ
ՀԻՄՆ


Աշխատանքային փոխհարաբերություններ եւ աշխատանքային պայմանագիր




Գծապատկեր 7. Արդյոք աշխատանքային փոխհարաբերությունները ամրագրված են




Գծապատկեր 10. Արդյոք Ձեր աշխատանքային պայմանները, աշխատանքային իրավունքները և պարտականությունները ապահովվում են այնպես, ինչպես ներկայացվել է նախապես




Գծապատկեր 13. Աշխատանքային պայմաններում առկա՞ է առողջության համար վտանգավոր կամ վնասակար գործոնների ազդեցություն



Գծապատկեր 16. Իսկ առողջության համար վնասակար կամ վտանգավոր գործոնների մասին Նշված է Ձեր պայմանագրում կամ բանավոր կերպով քննարկվե՞լ է գործատուի հետ



Գծապատկեր 15. Ստանձնում եք որևէ փոխհատուցում աշխատանքի վտանգավորության կամ վնասակարության համար



■ Այո


■ Ոչ

■ Զրաժարվում եմ պատասխանել


■ Այո, բայց չնչին գումար

■ Դժվարանում եմ պատասխանել

Գծապատկեր 18. Ըստ պայմանագրի եւ իրականում աշխատանքային օրվա տևողությունը




Գծապատկեր 22. Աշխատաժամանակի և հանգստի ժամանակի տևողությամբ բավարարվածություն




- Լիովին բավարարում է
- Որոշ չափով բավարարում է
- Որոշ չափով չի բավարարում
- Բոլորովին չի բավարարում


Գծապատկեր 24. Արտաժամյա աշխատանք կատարելու հաճախականությունը




Գծապատկեր 25. Տոնական կամ հանգստյան օրերին աշխատանքի դիմաց փոխհատուցում



Գծապատկեր 26. Արդյոք տրամադրվել է ամենամյա վճարովի արձակուրդ



Գծապատկեր 28. Ձեր աշխատավայրում աշխատանքի էական պայմանները /աշխատավարձ, պաշտոն, աշխատավայր, ռեժիմ և այլն/ փոփոխվո՞ւմ են աշխատողի և գործատուի փոխադարձ համաձայնությամբ



Այսպիսով՝

- Հարցվածների 16.7%-ը չունի աշխատանքային պայմանագիր
- Հարցվողների 7.2%-ը նշել է, որ ամեն օր իրականացնում է արտաժամյա աշխատանք: Արտաժամյա աշխատանքի դիմաց հավելավճար ստանում է այն երբևէ իրականացնողների միայն 28.4%-ը:
- Հարցվողների 27,5%-ը գրեթե միշտ կամ հաճախակի աշխատում է ոչ աշխատանքային օրերին, ևս 26.8%-ը՝ հազվադեպ: Նրանց 54.4%-ը նշել է, որ դա համարվում է սովորական աշխատանքային օր, որի դիմաց հավելյալ չեն վճարվում:
- Առողջության համար վտանգավոր ազդեցությունների առկայության դեպքում աշխատող հարցվողների 79.2%-ը չի ստանում որևէ փոխհատուցում: Ավելին՝ այդ հարցվողների մոտ 40%-ը գործատուի կամ վերադասի հետ չի քննարկել աշխատանքային պայմանների վտանգավորության կամ վնասակարության հարցը:

Աշխատանքային փոխհարաբերությունների իրավական ամրագրման բացակայության պայմաններում աշխատողները դուրս են մտնում աշխատանքային օրենսդրությամբ պաշտպանված լինելու հնարավորությունից: Նման դեպքերում գործատուները չեն ջանում ապահովել արժանապատիվ աշխատանքային պայմաններ և համապատասխան վերաբերմունք:

Ծրագրի շրջանակներում իրագործելի առաջարկ

- Անհրաժեշտ է բարձրացնել հանրային իրազեկության մակարդակը աշխատանքային իրավահարաբերությունների երաշխիքների վերաբերյալ՝ խթանելով, որպեսզի աշխատանքի անցնելիս գործատուից պահանջեն կնքել պայմանագիր և հետամուտ լինեն աշխատել ամրագրված իրավահարաբերությունների սահմաններում:
- Անհրաժեշտ է տրամադրել իրավախորհրդատվություն և ուղղորդում, ինչպես նաև համագործակցել համապատասխան մարմինների, մասնավորապես Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի հետ՝ նման խնդիրների հատային և համակարգային լուծման ուղղությամբ:




ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՍՏՈՒ
EUROPEAN UNION FOR ARMENIA




Կորոնավիրուսի ազդեցությունը աշխատանքային պայմանների փոփոխության վրա




Գծապատկեր 17. Արդյոք գործատուն ապահովե՞լ է կորոնավիրուսի տարածումը կանխարգելող միջոցառումներ աշխատողների համար



Գծապատկեր 31. Կորոնավիրուսով պայմանավորված ստիպված եղել եք չաշխատել /պարապուրդի մատնվել



Գծապատկեր 32. Կորոնավիրուսով պայմանավորված պարապուրդի ընթացքում արդյոք վարձատրվել եք



Այսպիսով՝

Թեև կորոնավիրուսային համավարակի կանխարգելման միջոցառումներ չեն ձեռնարկվել հարցվածներից միայն 2,9%-ի աշխատավայրերում, հիվանդությամբ վարակվել են հարցվածների 46.7%-ը: Համավարակով պայմանավորված չի աշխատել կամ պարապուրդի է մատնվել հարցվածների 36.4%-ը, որոնցից այդ ժամանակահատվածում ամբողջությամբ վարձատրվել է 54,7%-ը:

ԱՄԵՆԱՄՅԱ ՎՃԱՐՈՎԻ ԱՐՁԱԿՈՒՐԴ

- Աշխատողների 9.8%-ը տեղյակ չեն, որ ունեն ամենամյա վճարովի արձակուրդից օգտվելու իրավունք, իսկ կեսը իրազեկված չեն դրա տևողության և պայմանների վերաբերյալ, լավատեղյակ չեն, թե ինչպես է հաշվարկվում աշխատավարձը, չգիտեն, թե ինչ պետք է կամ ինչ կարող են անել, երբ իրականացնում են աշխատանքային պայմանագրով կամ պայմանավորվածությամբ չնախատեսված աշխատանք:
- Աշխատողները միշտ չէ, որ կարողանում են արտահայտել իրենց դժգոհությունն աշխատանքային պայմանների, աշխատանքային փոխհարաբերությունների, աշխատանքի վարձատրության, արձակուրդի կամ այլ հարցերի շուրջ:

Ծրագրի շրջանակներում իրագործելի առաջարկ

- **Անհրաժեշտ է կազմակերպել դասընթացներ աշխատողների և աշխատողների ներկայացուցիչների համար՝ օգտագործելով ինչպես հասարակական կազմակերպությունների, այնպես էլ պետական կառույցների, նաև արհմիությունների ներուժը:**




ԵՎՐՈՊԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՍՏ
EUROPEAN UNION FOR ARMENIA

DECENT
WORK
NOW | ԱՐԺԱՆԱԴԱՏԻՎ
ԱՇԽԱՏԱՆՔ
ՀԻՄՆ


Աշխատանքային փոխհարաբերություններ, վեճեր եւ լուծման մեխանիզմներ



Գծապատկեր 35. Երբեւէ ունեցե՞լ եք դժգոհություն՝ կապված աշխատանքային պայմանների հետ



Գծապատկեր 36. Երբևէ արտահայտե՞լ եք դժգոհություն




Գծապատկեր 38. Երբ աշխատանքային պայմանների հետ կապված Ձեր դժգոհությունը ներկայացրել եք Ձեր գործատուին կամ անմիջական վերադասին, ապա



- Խնդիրն ամբողջությամբ լուծվել է
- Խնդիրը չի լուծվել

- Խնդիրը մասնակիորեն է լուծվել
- Դժվարանում եմ պատասխանել

Գծապատկեր 39. Ինչպե՞ս է փոփոխվել Ձեր գործատուի վերաբերմունքը դժգոհությունն արտահայտելուց հետո




■ Դեպի դրական

■ Ոչինչ չի փոխվել


■ Դեպի բացասական

■ Դժվարանում եմ պատասխանել


Գծապատկեր 40. Եղ՛ել է դեպք, երբ Ձեր գործընկերները համախմբվել են ընդդեմ գործատուի՝ աշխատավայրում որևէ խնդրի լուծման համար




**Գծապատկեր 41. Եթե Ձեր աշխատավայրում աշխատողները
Նախաձեռնեն բողոքի կամ իրենց իրավունքների
պաշտպանության գործողություններ, ի՞նչ տեղի կունենա**



Գծապատկեր 42. Ունեք արդյոք Արհմիություն Ձեր աշխատավայրում



Գծապատկեր 43. Հանդիսանո՞ւմ եք արդյոք Արհմիության անդամ




Այսպիսով՝

- Արհմիությունն առկա է հարցվողների միայն 28.3%-ի աշխատավայրերում:


Այն հարցին, թե ինչ է Ձեզ տալիս Արհմիությունը՝

- Հարցվողների կեսը կարևորել է արհմիությունների դերը որպես նյութական ու հոգևոր աջակցություն տրամադրող ինստիտուտ,
- միայն 10.9%-ը՝ որպես խախտված իրավունքների վերականգնման միջոց,
- 4.5%-ը՝ անվճար խորհրդատվության, իսկ
- 4.1%-ը՝ միայնակ չլինելու միջոց:
- Հարցվողների 23.2%-ը նշել է, որ արհմիությունը ոչինչ էլ չի տալիս իրենց կամ դժվարացել է պատասխանել այն հարցին, թե ինչ է արհմիությունն իրենց տալիս:

Գծապատկեր 44. Գործատուի հետ վեճի ներքաշվելու պարագայում ում կդիմեիք



Գծապատկեր 46. Հնարավոր է արդյոք, որ Դուք կամ Ձեր գործընկերները կարծիք կամ դիրքորոշում արտահայտելու համար անհիմն տույժի կամ վատ վերաբերմունքի արժանան



Ծրագրի շրջանակներում իրագործելի առաջարկներ


- Բոլոր աշխատողների համար աշխատանքային հավասար հնարավորություններ ապահովելուն ուղղված ջանքերը պետք է լինեն հասարակական կազմակերպությունների, պետական կառույցների և գործատուների ուշադրության կենտրոնում:
- Այդ գործողություններն անհրաժեշտ է իրականացնել բոլոր բնագավառներում՝ սկսած աշխատավայրի ֆիզիկական հարմարեցումից մինչև մտածելակերպի, աշխարհայացքի փոփոխություն: Այս առումով անհրաժեշտ է լավագույն փորձի տեղայնացման և հանրայնացման գործողությունների իրականացում և համապատասխան քաղաքականությունների մշակում:
- Անհրաժեշտ է, որպեսզի հասարակության մեջ արմատանա այն մոտեցումը, որ աշխատողը գնահատվում է իր մասնագիտական կարողությունների և կատարած աշխատանքի շնորհիվ, որտեղ որոշիչ չեն կարող լինել այնպիսի գործոններ, ինչպիսիք են սեռը, տարիքը, գենդերային պատկանելությունը, ֆիզիոլոգիական կառուցվածքը և այլն:
- Անհրաժեշտ է կազմակերպել դասընթացներ աշխատողների և աշխատողների ներկայացուցիչների համար՝ օգտագործելով ինչպես հասարակական կազմակերպությունների, այնպես էլ պետական կառույցների, նաև արհմիությունների ներուժը:



ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

Այս զեկույցը պատրաստվել է Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ: Բովանդակության համար պատասխանատվություն է կրում Հասարակական հետազոտությունների առաջատար խումբը հասարակական կազմակերպությունը, եւ պարտադիր չէ, որ այն արտահայտի Եվրոպական միության տեսակետները:





«Կորոնավիրուսի համավարակի ազդեցությունը Հայաստանում կանանց աշխատանքային իրավունքների իրադրության վրա»

Մարիամ Խալաթյան
Նվարդ Մարգարյան
«Սոցիոսկոպ» ՀԿ
17.02.2022

Յետագոտության մեթոդաբանական շրջանակ

Յետագոտությունն իրականացվել է երեք փուլով՝

- * տվյալների երկրորդային վերլուծություն*
- * փորձագիտական հարցազրույցներ*
- * տրիադաներ կանանց հետ*


Յետագոտության մեթոդաբանական շրջանակ

Յետագոտական հարցերը՝

- Covid 19 համավարակի շրջանակներում իրականացված քաղաքականություններն ու դրանց գաղափարական հենքը;
- Քաղաքականությունների թիրախը, նպատակը, խնդիրները;
- Սոցիալական աջակցության ծրագրերի առնչությունը կանանց աշխատանքային իրավունքներին;
- Քաղաքականությունների և ծրագրերի գնահատում;
- Սոցիալական արդարության հեռանկարները:

Ջետազոտության սահմանափակող գործոններ

- Ինստիտուցիոնալ հիշողության պակաս;
- Փորձագետների սուղ կոմպետենցիաներ;
- Աշխատանքային իրավունքների մասին տեղեկացվածության պակաս;
- Կաշկանդվածություն և վախ գործատուից, աշխատանք կորցնելուց;



Covid-19 համավարակից տուժած խոցելի խմբերը և նրանց հիմնական խնդիրները

Կազմակերպությունների թիվը, աշխատողների թվաքանակը

	Կազմակերպությունների թիվը		Աշխատողների թվաքանակը, մարդ	
	2019թ.	2020թ.	2019թ.	2020թ.
Հունվար	40 676	46 200	560 612	600 340
Փետրվար	41 391	48 186	569 275	614 812
Մարտ	41 576	48 802	569 450	618 565
Ապրիլ	42 931	46 082	588 243	585 103
Մայիս	43 639	49 010	596 718	607 848
Հունիս	44 290	51 188	601 524	632 964
Հուլիս	44 655	51 879	603 017	632 591
Օգոստոս	44 936	52 658	602 373	635 414
Սեպտեմբեր	45 577	53 560	614 459	648 306
Հոկտեմբեր	45 792	52 902	620 552	639 091
Նոյեմբեր	46 099	52 109 [◇]	624 763	632 313 [◇]
Դեկտեմբեր	46 392	52 427 ¹	627 831	637 389 ¹

2020 մարտ-ապրիլ
կազմակերպություններ
48,802 - 46,082 - 49 010

աշխատողներ
618,565 - 585,103 -
607,848

Համավարակի ազդեցությունը տնտեսության եւ առողջության վրա

	ՀՆԱ	Չբ.	% ♀	Չբ. ազդեց.	Առ. ազդեց.
Մշակող արդյունաբերություն	12,4	9,9	39,6	չափազանց բարձր	բարձր
Շինարարություն	7,3	9,4	1,0	չափազանց բարձր	միջին
Մեծածախ և մանրածախ առևտուր	12,4	11,4	43,3	չափազանց բարձր	բարձր
Կացության և հանրային սննդի կազմակերպում	2,0	2,5	50,2	չափազանց բարձր	բարձր
Մշակույթ, զվարճություններ և հանգիստ	6,2	1,6	48,2	չափազանց բարձր	միջին
Սպասարկման այլ ծառայություններ	1,0	2,9	45,0	չափազանց բարձր	միջին

Ըստ 2020թ. տվյալների՝

- աշխատանքային շուկայում զբաղված է կանանց 41%-ը;
- աշխատանքային տարիքի 10 կանանցից 4-ն ունեցել են աշխատանք;
- 15-74 տարեկան կանանց 51%-ը չի ունեցել աշխատանք և չի փնտրել;
- աշխատուժից դուրս կանանց և տղամարդկանց մեջ առկա սեռային խզվածքը 39,3% է, և այն հատկապես բարձր է 25-49 տարիքային խմբում, որտեղ հասնում է մինչև 67,3% -ի:

Աշխատատեղերի կորուստ

Կանայք

- 4,2%
- 54 մլն

Տղամարդիկ

- 3%
- 60 մլն

Աշխատատեղերի վերականգնում

2021-ին 2019-ի համեմատ
վերականգնվել է՝

- կանանց - **41 մլն**
աշխատատեղ

- տղամարդկանց - **59 մլն**
աշխատատեղ

Covid 19 համավարակից տուժած ոլորտներն ու խմբերն ըստ փորձագետների

Պետական ոլորտի փորձագետներ

- տնտեսություն՝ արտադրություն, շինարարություն, սպասարկման ոլորտ, ժամանց ու զվարճություններ և այլն;*
- աշխատող մարդիկ՝ հատկապես օրավարձով աշխատողներ, ՃՄՊ-ով աշխատողներ, թաքնված աշխատողներ;*
- շահույթ և աշխատողների քանակ թաքցրած բիզնեսները;*

Covid 19 համավարակից տուժած ոլորտներն ու խմբերն ըստ փորձագետների

Հասարակական ոլորտի փորձագետներ

- տնտեսություն՝ արտադրություն, շինարարություն*
- սպասարկման ոլորտ, ժամանց ու զվարճություններ եւ այլն;*
- կրթություն, մշակույթ եւ սպորտ;*
- տուրիզմ եւ հյուրընկալության ոլորտ;*

Covid 19 համավարակից տուժած ոլորտներն ու խմբերն ըստ փորձագետների

Հասարակական ոլորտի փորձագետներ

- Կանայք՝ աշխատող մայրեր, բազմազավակ մայրեր, մանկահասակ երեխաներ ունեցող մայրերը, միայնակ մայրեր
- Ցածր վարձատրվող աշխատողներ՝ հավաքարարներ, կենցաղային սպասարկման աշխատանք իրականացնողներ;
- Փակ հաստատություններ եւ այնտեղ աշխատողներ;
- Նպաստառու ընտանիքներ;
- Քրոնիկ հիվանդություն ունեցող անձինք;

Covid 19 համավարակից տուժած ոլորտներն ու խմբերն ըստ փորձագետների

Հասարակական ոլորտի փորձագետներ

- *ՏաքսուՆ վարորդներ;*
- *Վարձակալութայամբ բնակվողներ;*
- *Covid 19-ով հիվանդ անձինք եւ նրանց ընտանիքի անդամները;*
- *Անհատ երգիչ կատարողներ, հանդիսավարներ եւ թամադաներ;*
- *ՀԿ-ներն ու արհմիությունները;*
- *եւ այլն:*

Covid 19 համավարակից տուժած խմբերի խնդիրները

- Աշխատանքի կորուստ, եկամտի կորուստ;
- Չգրանցված աշխատողներ, աշխատավարձ ֆիքսված գումարը
չէր համապատասխանում իրական աշխատավարձի թվին
- Հաստիքային եւ ոչ հաստիքային աշխատողների վճարումը,
ԾՄՊ-ներ;
- Պարապոլրոդ, իրենց հաշվին արձակուրդ, եւ այլն;
- Խնամքի հաստատություններում գրաֆիկի փոփոխություն;
- Խմբակների, բիզնեսի փակում;
- աշխատողների համար անվտանգ աշխատանքային
պայմաններ չապահովելը; եւ այլն:

Աջակցության ծրագրեր

- Պետական՝ սոցիալական եւ տնտեսական;
- Քաղհասարակության կողմից իրականացված սոցիալական աջակցության ծրագրեր և միջոցառումներ;
- Միջազգային կազմակերպությունների կողմից տրամադրված աջակցություն:

Պետության տրամադրած աջակցության ծրագրերի խնդիրները

- նախապես չուսումնասիրված, չգնահատված ռեակցիոն լուծումներ ու արձագանք;
- արձագանքը որոշ դեպքերում ժամակավրեպ էր՝ արագ փոփոխվող խնդիրների և կարիքների պայմաններում;
- լուծումները ինստիտուցիոնալ չէին, աջակցության տրամադրման մոտեցումը շատ ընդհանուր՝ առանձնահատկությունները հաշվի չառնող;
- տվյալների բազաների անհամադրելիության, ոչ լիարժեքության խնդիրը -> հասցեականության խնդիրը, կրկնությունները, անհամապատասխանությունը;
- մատչելիություն- աջակցություն ստացող խմբերի հնարավորությունները

Պետության տրամադրած աջակցության ծրագրերի խնդիրները

- հասանելիություն- տեղեկատվության պակասը, տեխնիկապես հասանելիության հարցը;
- ծրագրերը կարճաժամկետ էին և մինչև այժմ արդյունքի և ազդեցության գնահատում իրականացված չէ;
- ՀԿ-համայնքներ աշխատանքային արդյունավետության հարցը;
- չհամակարգված գործողությունների համավարակի վերահսկման գործընթացն ապահավող դերակատարների միջև:

Սոցիալական արդարության տեսլականը

- Անապահովության նպաստ համակարգի վերանայում, հասցեականության խնդրի կարգավորում;
- գործազրկության ապահովության համակարգի աստիճանական ներդրում, սոցիալական երաշխիքներ;
- ապահովագրական փաթեթներ աշխատողների համար. համընդհանուր առողջապահական ապահովագրություն;
- կենսաթոշակի բարձրացում, որը կխթանի գրանցված աշխատանք ունենալը;
- ծայրահեղ աղքատության, աղքատության կրճատում:

Առաջարկություններ

- 1. Պետական համակարգում տվյալների բազաների թվայնացում, հասանելիություն պետական տարբեր մարմիններին և հնարավորինս թարմ ու ճիշտ նույնականացված տվյալների ներառում;*
- 2. Պետական աջակցության ծրագրերում ներառել միջոցառումների գնահատման և մշտադիտարկման պլան՝ հստակ չափորոշիչներով՝ ծրագրերն ու ծառայություններն առավել մատչելի դարձնելու նպատակով;*
- 3. Ձևավորել ինստիտուցիոնալ հիշողություն՝ համակարգային, անհատների վրա չհիմնված;*

Առաջարկություններ

- 4. Սոցիալական երաշխիքների ընդլայնում՝ ստվերից դուրս գալու համար;*
- 5. Հաղորդակցությունը հանրության հետ իրականացնել հստակ և մատչելի;*
- 6. Հասարակական կազմակերպություններին առաջարկում ենք ավելի ինտենսիվ համագործակցություն, արտակարգ իրավիճակներում ռեսուրսների ճիշտ բաշխում, կիրառում, հնարավոր կրկնություններից խուսափում;*



«ՀԱՆՈՒՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ. ՀԱՇՎԵՏՈՒ ԵՎ ՆԵՐԱՌԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՇՈՒԿԱՅԻ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆ» ԾՐԱԳԻՐ

ԿԱՐԻՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ
ՀԵՏԱՉՈՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

ՏԱԹԵՎԻԿ ԶՀԱՆՅԱՆ



ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՔԱՆԱԿԱՆ ԵՎ ՈՐԱԿԱԿԱՆ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ ՔԱՆԱԿԱԿԱՆ ՀԱՐՑՈՒՄՆԵՐ

Հեռախոսային հարցում – **485** հարցվող /18-35 տարեկան ՀՀ քաղաքային բնակիչներ/:

Բնակավայր	Հարցումների քանակ
Երևան	332
Արմավիր	26
Լոռի	40
Կոտայք	44
Շիրակ	43
Ընդամենը	485

Հեռախոսային հարցումներ **CATI** մեթոդով:

Ընտրանքը հաշրվարկվել է ՀՀ 15-35 տարիքային խմբի քաղաքային բնակչության թվի հիման վրա:

Տվյալների ճշտություն՝ **$\gamma = 97\%$**

Սահմանային սխալի գործակիցը՝ **$\Delta = \pm 2.5\%$**

Տվյալների հավաքագրման փուլ՝ 10 օր (01-10 սեպտեմբերի, 2022թ.)

Որակի կրկնակի ստուգում՝ **43.4%**




ՀԵՌԱՆՈՍԱՅԻՆ ՀԱՐՑՈՒՄՆԵՐԻ ՈՐԱԿԻ ՍՏՈՒԳՈՒՄ

Հեռախոսային հարցումների շրջանակներում հարցազրուցավարների աշխատանքի և հարցազրույցների որակի ստուգումն իրականացվել է հետևյալ փուլերով.

1. Հարցազրուցավարների աշխատանքի վերահսկում տվյալների հավաքագրման պատասխանատուի կողմից
2. Հեռախոսազանգով ստուգում
3. Հարցաթերթերի տրամաբանության և տևողության ստուգում՝ 100%

Որակի ստուգման փուլ (խոտան հարցաթերթեր)	Քանակ	Տոկոս
Հարցաթերթի մոնիտորինգ	4	0.9
Հեռախոսազանգ	3	0.6
Չուզայց/ձայնագրության լսում	2	0.6
Ընդամենը	9	1.9
Տվյալների բազա	476	



ՏՎՅԱԼՆԵՐԻ ՀԱՎԱՔԱԳՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ԱՏԱՑՎԱԾ ՄԵՐԺՈՒՄՆԵՐ

Հետազոտության ընթացքում **485** իրականացված հարցումների համար անհրաժեշտ է եղել դիմել **718** պոտենցիալ հարցվողների՝ հետազոտությանը մասնակցելու համաձայնություն ստանալու նպատակով, ինչի արդյունքում մերժումները կազմել են **32.5% (233)**:



ՈՐԱԿԱԿԱՆ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑՆԵՐ

- Հետազոտության շրջանակներում իրականացվել են փորձագիտական հարցազրույցներ ոլորտի մասնագետների հետ:
- Փորձագիտական հարցազրույցներում ընդգրկվել են **25** մասնակից, ովքեր միջին և բարձր դասի ղեկավարներ են:
- Փորձագիտական հարցազրույցների մասնակիցները ոլորտում ունեն առնվազն 2 տարվա աշխատանքային փորձ, ինչը հնարավորություն է տալիս առավելագույն տեղեկատվության հասանելիությանը:

	Գործունեություն/Կազմակերպություն	Քանակ
1	Մարդկային Ռեսուրսների Կառավարում	16
2	Մարդու Իրավունքների Պաշտպանի Գրասենյակ	2
3	ՀՀ Առողջապահական և Աշխատանքի Տեսչական Մարմին	4
4	Հայաստանի Արհմիությունների Կոնֆեդերացիա	3
Ընդամենը		25



ՀԵՌԱՆՈՍԱՅԻՆ ՀԱՐՑՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՍՓՈՓՈՒՄ


Հետազոտության քանակական հարցումներն իրականացվել են հեռախոսային հարցազրույցների միջոցով /CATI-Computer-Assisted Telephone Interviewing/


Հարցման մասնակիցների սեռային կազմն ունի հետևյալ պատկերը.

Արական – 190 հոգի՝ հարցվողների 40%

Իգական – 286 հոգի՝ հարցվողների 60%

Հարցվողների սեռա-տարիքային բաշխումը/տոկոսներով





Հարցման պահին աշխատանք ունեցող հարցվողների աշխատանքային հարաբերությունները գործատուի հետ Երևանի և մարզային քաղաքների բնակիչների մոտ

	Երևան	Մարզային քաղաքներ
Ունեն աշխատանքային կամ ծառայությունների մատուցման պայմանագիր	84%	79%
Չունեն կնքված պայմանագիր	16%	21%

Հարցման պահին աշխատանք չունեցող հարցվողների աշխատանքային հարաբերությունները նախորդ՝ վերջին գործատուի հետ Երևանի և մարզերի բնակիչների մոտ

	Երևան	Մարզային քաղաքներ
Ունեցել են աշխատանքային կամ ծառայությունների մատուցման պայմանագիր	56%	48%
Չեն ունեցել կնքված պայմանագիր	44%	52%



Հարցվողների ամենամյա վճարովի արձակուրդի մասին տեղեկատվություն

	Աշխատանք ունեցողներ				Աշխատանք չունեցողներ			
	Երևան		Մարզային քաղաքներ		Երևան		Մարզային քաղաքներ	
Այո, ունենում եմ ամենամյա վճարովի արձակուրդ	182	71%	70	62%	16	24%	10	26%
Այո, ձևակերպվում և վճարվում եմ արձակուրդի համար, սակայն այդ ընթացքում ստիպված գնում եմ աշխատանքի	0	0%	2	2%	0	0%	0	0%
Այո, ունենում եմ արձակուրդ, սակայն չեմ վճարվում դրա համար	5	2%	0	0%	2	3%	1	3%
Ոչ, չեմ ունենում ամենամյա պարտադիր վճարովի արձակուրդ	64	25%	35	31%	50	74%	26	67%
Այլ /նշել/	5	2%	6	5%	0	0%	2	5%
Ընդամենը	256	100%	113	100%	68	100%	39	100%



Աշխատանքային իրավունքների պահպանում և վերահսկում

Այն հարցին, թե աշխատանքային գործունեության ընթացքում հարցվողը կամ իր գործընկերները աշխատանքային իրավունքների ոտնահարման ինչպիսի դեպքերի են ականատես եղել, հարցվողների **33%** -ը նշել է, որ չի հանդիպել աշխատանքային իրավունքների ոտնահարման դեպքերի:

Իսկ այն հարցվողները, ովքեր հանդիպել են աշխատանքային իրավունքների ոտնահարման դեպքերի, նշել են աշխատանքային իրավունքների ոտնահարման հետևյալ դեպքեր:



1	Գերձանրաբեռնվածություն	24.1%
2	Աշխատավարձի անհամապատասխանություն	17.9%
3	Գերլարված/սթրեսային պայմաններում աշխատանք	16.5%
4	Արտաժամյա աշխատանք /չվճարվող կամ քիչ վճարվող/	8.2%
5	Աշխատաժամեր և հանգստի համար նախատեսված ժամանակ	7.0%
6	Աշխատանքային պարտականություններից դուրս հանձնարարություններ	6.4%
7	Աշխատանքային պայմանների անվտանգություն	4.0%
8	Սոցիալաթերի հետ կապված խնդիրներ	2.4%
9	Աշխատանքային պայմանագրի կնքում/չկնքում	2.3%
10	Խտրականություններ քաղաքական հայացքների պատճառով	2.2%
